ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանի՝ Բելգիայի Թագավորություն (Բրյուսել) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Վիգեն Քոչարյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Բելգիայի Թագավորություն (Բրյուսել), 2019թ. հունիսի 12-ից 14-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպական միություն:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն ՀՀ-ԵՄ գործընկերության խորհրդի 2-րդ հանդիպմանը:

Քննարկված թեմաները՝ Խորհուրդը քննարկել է օրենքի գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում համագործակցությունը, էներգետիկայի, տրանսպորտի, բնապահպանության և կլիմայի փոփոխության Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերությունում Հայաստանի մասնակցությունը, այդ թվում՝ 2019թ. փետրվարին Տրանսեվրոպական տրանսպորտային ցանցի դեպի Հայաստան ընդլայնումը, ինչպես նաև ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն կլիմայի համար» տարածաշրջանային նախագծի շրջանակներում համագործակցությունը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

2019 թվականի հունիսի 13-ին Բելգիայի Թագավորությունում (Բրյուսել) կայացել է Հայաստան- Եվրոպական միություն Գործընկերության խորհրդի երկրորդ հանդիպումը: Վերջինիս մասնակցել է Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Զոհրաբ Մնացականյանի գլխավորությամբ, որի կազմում էր նաև ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը:

Հարկ է նշել, որ Խորհրդի նիստը վարել են ՀՀ արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանը և Եվրոպական միության արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին:

ՀՀ-ԵՄ միջև Գործընկերության խորհրդի երկրորդ նիստին ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը հանդես է եկել ելույթով, որի ընթացքում ներկայացրել է դատահիրավական ոլորտում տեղի ունեցող վերջին զարգացումները, անդրադարձել կոռուպցիայի դեմ պայքարի և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում ռազմավարական քաղաքականության մշակման գործընթացներին:

Անդրադառնալով դատական և իրավական բարեփոխումների ազգային օրակարգին՝ արդարադատության նախարարի տեղակալը վերահաստատել է ՀՀ կառավարության հանձնառությունը և քաղաքական կամքը ՀՀ սահմանադրությանը և միջազգային չափանիշներին համապատասխան դատական համակարգի վճռական և արմատական բարեփոխումների իրականացման հանդեպ: ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը իր ելույթում նշել է, որ վերը նշված բարեփոխումներն ուղղված կլինեն արդարադատության և օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի ապահովմանը, կնպաստեն իրապես անկախ, արդյունավետ և հաշվետու դատական համակարգի կայացմանը՝ նպատակ ունենալով վերականգնել վերջինիս հանդեպ հանրության վստահությունը:

Վիգեն Քոչարյանը կարևորել է 2018թ. սեպտեմբերին Հայաստանի և ԵՄ-ի միջև արդարադատության ոլորտում բարձր քաղաքական երկխոսության մեկնարկը: Բարձր գնահատելով նմանօրինակ հարթակի ստեղծումը՝ նախարարի տեղակալը շնորհակալություն է հայտնել ԵՄ կողմին արդարադատության ոլորտին տրամադրվող տեխնիկական և ֆինանսական աջակցության համար և վերահաստատել պատրաստակամությունը խորացնելու և ընդլայնելու առկա սերտ համագործակցությունը:

Խորհուրդը վերահաստատել է Հայաստանի և Եվրամիության հանձնառությունն արդյունավետորեն կիրարկելու Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ): Մասնավորապես, շեշտվել է, որ համաձայնագիրը կարող է կարևոր դեր խաղալ Հայաստանի արդիականացման գործում: Խորհուրդն ընդգծել է օրենքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի կարևորագույն նշանակությունը, որը ներառում է անկախ, արդյունավետ և հաշվետու արդարադատության համակարգ:

Նիստի արդյունքներով Խորհուրդը հանդես է եկել համատեղ հայտարարությամբ, որով Խորհուրդն ընդգծել է անկախ, արդյունավետ և հաշվետու դատական համակարգի կարևորությունը: Վերջինս նպաստելու է ոչ միայն մարդու իրավունքների պաշտպանությանը, այլ նաև տնտեսական զարգացմանը և օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ բիզնես միջավայրին: Խորհուրդն ողջունել է ներկայումս Հայաստանում համապարփակ դատական բարեփոխումների ուղղությամբ գործադրվող ջանքերը՝ Հայաստանի սահմանադրությանը և միջազգային չափանիշներին համապատասխան:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Վիգեն Քոչարյան

17.06.2019թ.

X _____